Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱԱ իսկական անդամ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Վաչե Սմբատի Նալբանդյանը կես դար է արդեն, որ ուսումնասիրում է մեր ազգային մատենագրությունը:

Հայոց հոգևոր կյանքում իրենց սենեխաղեպ նշանակությամբ առանձնանում են երեք մեծ դարաշրջան, որոնց ընթացքում հայ ստեղծագործ հանճարը նանդես է եկել իր ողջ փայլով: Առաջինը կապված է ինքնուրույն գրի ու գրականության ստեղծման ժամանակների կամ Հայոց Ոսկեդարի հետ, որպես հետևանք քրիստոնեական կրոնի ստաջ բերած հոգևոր, հասարակական ու քաղաքական շրջադարձի: Երկրորդը նշանավորվում է Հայկական վերածննդով և միջնադարյան Հայաստանի մշակութային հզոր վերելքով՝ կապված Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանի, նարտարապետության ու մանրանկարչության նոր դպրոցների և աշխարհիկ մատենագրության երևան գալով, որով հայ գրականությունն ու արվեստը ձեռք են բերում համաշխարհային նշանակություն: Վերջապես՝ երրորդ մեծ վերածնունդը հատկանշվում է Մխիթարյանների գործունեությամբ և Խաչատուր Աբովյանի անմահ ստեղծագործությամբ՝ կապված հայության կազմավորման և ազատագրական պայքարի հերոսական ու ողբերգական ավարտի հետ, արդեն նոր դարի սկզբներին, որի տրամաբանական ավարտն եղավ աղդային նորաստեղծ պետականությունը:



Վ. Նալբանդյանի գիտական ուսումնասիրությունը և հետազոտական գործունեության առավել նշանակալից մասը առնչվում է Ոսկեդարի հայ մատենագրության առաջին երկու դարաշրջաններին, մասնավորապես, Մեսրոպ Մաշտոցի անձին ու գործին, Եղիշեի Պատմության գաղափարական նպատակադրվածությանը և Վարդանանց պատերազմի արդիական-դասերին, վերջապես՝ Փավստոս Բուզանդի Հայոց Պատմության վիպախառն դրվագների իրական քաղաքական բովանդակության բացահայտմանը, կապակցելով դրանք հին թեմաների նորօրյա գրական մշակումների հետ (Ստ. Զորյանի պատմվածքներ):

Մաշտոցին նվիրված աշխատության մեջ («Մեսրոպ Մաշտոց», Երևան, 1961) Վ. Նալբանդյանը ցույց է տալիս, որ հայոց գրերի ու դպրության մեծ հիմնադիրը՝ գործելով մեր պատմության ամենադրամատիկ ժամանակաշրջանում, իր համոզումների ու կոչման բեղադրանքով սկզբներում ձգտում էր աստվածային բանի լույսով հոգևոր մխիթարություն բերել իր ազգակիցներին, որոնք միանգամայն զուրկ էին սեփական լեզվով ու գրերով շարադրված արքազան մատյաններից հոգևոր սնունդ ստանալու հնարավորությունից: Իսկ երբ նա տեսավ ու ստիպնաբար ըմբռնեց կործանման դատապարտված հայության ողբերգական վիճակը, ականատես դարձավ Արշակունյաց հարստության վերջնական անկմանը և երկատված, անգամ քառատված հայրենիքի աշխարհների ու առանձին գավառների միակցմանը Պարսից և Բյուզանդական տերություններին, մասամբ էլ հարևան Վրաստանին ու Աղվանքին, վերաիմաստա-

վորեց իր մշակութային ու հաղարական գործունեության նշանարանն ու ներքին բովանդակությունը:

Մաշտոցի ստեղծած գրերը, հիմնադրած հայագիր դպրոցը, նրանից սկիզբ առնող դրական, մշակութային շարժումն արդեն ձևոր էին բերում մոդական գործություն՝ դառնալով ազգապահպանության հուսալի պատվար: Դպրությունը, հիրավի, դառնում էր ազգության փրկության փորձված ու հուսալի գենք, մարդու բարոյական մաքրագործման դպրոց ու ազգահավաքման հրավեր: Աշխատության մեջ Վ. Նալբանդյանը առանձնահատուկ ուշադրություն է նվիրել Մաշտոցի աշխարհիկ կյանքի ու գործունեության գլխավոր էջերին, ցույց տվել երկրային ու հզոր գործերի մեջ Մաշտոցի դրսևորած նախանձելի հմտության ներքին ու արտաքին ազդակները, որոնք պատանեշված չէին ազգության հաղարական ու հոգևոր վիճակից:

Նույն դարաշրջանի մատենագրությանը նվիրված աշխատություններից կուզեինք այնուհետև հիշատակել «Վարդանանց Պատերազմը և Դ. Դեմիրճյանի Վարդանանքը» միասնամանակ հայերեն ու ռուսերեն լեզուներով լույս տեսած մենագրությունը (Երևան, 1955, 1956), «Գրոցը և պատմությունը» (Երևան, 1970) ծավալուն ուսումնասիրությունը, Եղիշեի անձին ու գործին նվիրված գիրքը, իր երկլեզվյան համառոտ ու ընդարձակ տարբերակներով («Եղիշե», Երևան, 1959, *«Егише», Ереван*, 1962, 1972), «Հայոց հնադարի դասերը» մաքուր ուսումնասիրությունների շարքը (Երևան, 1985): Հիշյալ աշխատությունների մեջ նոր, ուրույն հայեցակետ է զարգացվում վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժումների և Եղիշեի Պատմության գիտական ու գեղարվեստական արժեքների մասին: Գիտնականի քննարկումները դուրս են գալիս սովորական գրական-բանասիրական հետախնդրությունների ոլորտներից և իրենց առաջադրած ու լուծած հարցերով լուրջ նպաստ բերում նաև պատմական գիտությանը:

Իր «Հայերի կողմից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թ. ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջը» (1951), «451 թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջը» (1953), «Դենել-տիրիրյան վիպական ավանդության պատմական հիմքի հարցի շուրջը» (1964) և այլ փոքրածավալ հետազոտություններում Վ. Նալբանդյանը առաջադրել ու լուծել է հարցեր, որոնք նոր լույս են սփռում հայոց պատմության մութ կողմերի վրա, որոնք վրիպել էին մասնագետների ուշադրությունից: Հիշենք, մասնավորապես, IV դարի Արշակունյաց հարստության պետական կենտրոնացման քաղաքականության, հայ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների բարդ հակամարտությունների մի քանի հարցերը, Վարդանանց ապստամբության քուն խորհրդի նորովի մեկնաբանությունները, որոնք բարձր գնահատական են ստացել և ընդունվել պատմաբանների կողմից:

Ուշադրություն են գրավում նաև հետազոտողի նկատողությունները տվյալ դարաշրջանի հայոց քաղաքական հոսանքների անհաշտ պայքարի ու շարժառիթների մասին, որոնք ի վերջո հասցրին Ավարայրի ճակատամարտին: Ե՛վ Վարդանանք, և՛ Վասակյաններ ըստ էության ձգտելով ազգային պետականության վերականգնմանը, չանում էին դրան հասնել տարբեր և իրարամերժ ուղիներով. մեկը՝ ազգային ոգին ու ավանդները պահպանելու, մյուսը՝ հրաժեշտ տալով քրիստոնեական կրոնին և արդեն ժողովրդի մեջ արմատացած բարոյական սկզբունքներին ու հասարակական հարաբերություններին, որդեգրելով վաղուց մերժված գաղափարախոսությունը՝ հեթանոսությունը: Մեկը ձգտում էր վրկել ազգությունը հոգով ու մարմնով, մյուսը՝ լոկ մարմնով, սառնց զգալու կամ հաշվի առնելու ոգուց հրաժարվելու աղետավոր հետևանքները, որոնք ի վերջո հանգեցնելու էին հայության վերացմանը:

Վարդանի և նրա զաղափարակից ուժերի կողմից հայոց քաղավորության վերականգնման մեծ գործի ռեալությունը հաստատելու համար գիտականը ուշագրավ վկայություններ է մեջ բերում ոչ միայն բուն սկզբնաղբյուրներից՝ Եղիշեի ու Փարպեցու աշխատություններից, այլև X դարի գրող Թովմա Արծրունու պատմագրից և Մեսրոպ Վայոցձորեցու՝ ս. Ներսես Մեծի վարքագրությունից:

Գիտնականի եզրակացությունները միանգամայն հիմնավոր են. «Վարդանանց պատերազմի հիմնական նպատակներից մեկը,—նկատում է Վ. Նալբանդյանը,—ձգտում էր վերջ տալ Հայաստանի կիսանկախ վիճակին, երկրում վերականգնել ինքնուրույն քաղաքական իշխանությունը՝ Հայոց թագավորությունը: Նման ըմբռնումը... թույլ է տալիս ոչ միայն ճիշտ մեկնաբանել Վարդանանց պատերազմի հայտնի դեպքերի բուն էությունը, այլև նոր դիրքերից լուսաբանել հայ ժողովրդի V և հետագա դարերի ազատագրական պայքարի որոշ կարևոր խնդիրներ» («Հայոց հնադարի դասեր», էջ 99):

Այս էլ նշենք, որ Եղիշեի անման ստեղծագործության գրական-պատմական արժեքը և գեղագիտական հատկանիշները նույնպես մինչ այս բավարար լուսաբանություն չէին ստացել, և Նալբանդյանի աշխատությունները այդ առումով լուրջ նպաստ են բերում նաև հայ գեղագիտական մտքի պատմությանը: Եղիշեի գրական հայեցությունների ձևավորման գործում, ինչպես գիտնականն է նշում, իրենց դերն են խաղացել ոչ միայն ազգային վիպասանության ավանդները, այլև անտիկ ու հելլենիստական մշակույթի հուշարձանները, որոնց փորձի ստեղծագործական յուրացման շնորհիվ նրա խոսքը ձեռք է բերել ներգործման հզոր ուժ, դառնալով՝ Եղիշեի իսկ բառերով ասած՝ «մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան» (Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին, Երևան, 1957, էջ 4—5): Գիտնականը հանգամանորեն վերլուծում է Եղիշեի հերոսական ասքի գեղարվեստական հատկանիշներն ու արտահայտչական միջոցները, մեկնաբանում բանաստեղծական պատկերների ու նկարագրությունների մեջ առկա ճարտասանական հնարները՝ հակասությունները, հակադրությունները, այլաբանությունները, մակդիրները, որոնց շնորհիվ V դարի անման գրողի խոսքը դարձել է անսովոր ձևով վառ ու արտահայտիչ, խիտ ու տարողունակ, թևավոր արտահայտություններով առատ, բայց և՝ քնարական, վարակելով ընթերցողին հայրենասիրական կրակով և անձնազոհության գաղափարով:

Վ. Նալբանդյանի տևական ուսումնասիրության նյութ է դարձել նաև միջնադարյան հայ բանաստեղծությունը՝ իր ձևավորման օրերից մինչև մայրամուտ: Այդ առիթով նրա խորհրդածությունները և ուշագրավ վերլուծումները տեղ են գտել մի շարք աշխատություններում, ինչպես օրինակ՝ «Միջնադարյան հայ տաղերգուներ» (1958), «Գրիգոր Նարեկացին և նրա «Մատեան ողբերգութեան» պոեմը» (1970), «Գրիգոր Նարեկացի» (հայերեն և ռուսերեն՝ 1990, 1991), «Ներսես Շնորհալի» (1977), «Սայաթ-Նովա (հայերեն և ռուսերեն՝ 1987), նախկին ԽՍՀՄ ԳԱ Համաշխարհային գրականության ինստիտուտի պատրաստած «Համաշխարհային գրականության պատմություն» բազմահատորյակի 2—5-րդ գրքերում հայ գրականությանը նվիրված ակնարկները (Մոսկվա, «Նաուկա», 1984—1988), որոնք ընդգրկում են V—XVIII դդ. հայ գրականության պատմությունը: Հիշյալ աշխատություններում Նալբանդյանը պատշաճ խորությամբ քննում ու մեկնաբանում է հայոց հին պատմական արձակի և միջնադարյան քնարերգության ազգային առանձնահատկությունները, աշխարհիկ ու հոգևոր բանաստեղծության փոխհարաբերության խնդիրները, հայկական վերածնության էական կողմերը, հայ և այլ գրականությունների առնչությունները և մատնանշում այն մեծ ավանդը, որ միջնադարի հայ մատենագիրներն ու բանաստեղծները մուծել են համաշխարհային գրականության մեջ:

Աշխատությունների այս շարքից մեկուսի է մնում Վ. Նալբանդյանի «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» գիրքը (Երևան-Թբիլիսի, 1958—1961, հայերեն, վրացերեն, ռուսերեն), ուր առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող մատենագրական նյութերի հիման վրա նորովի են լուսաբանվում հայ-վրացական քաղաքական ու մշակութային առնչությունները՝ զուգակցված սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական և կրոնական բազմազան հարցերի հետ, որոնք մշտապես ծագել ու քննարկվել են հարևան ազգերի միջև, մասնավորապես, Թբիլիսիի միջավայրում:

Վ. Նալբանդյանը նաև գիտահետազոտական աշխատանքի շնորհալի կազմակերպիչ է: Երկարամյա գրական-բանասիրական ուսումնասիրություններին զուգընթաց Նա հաջորդաբար գլխավորել է Երևանի Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի Ինստիտուտ Մատենադարանը (1952—1954 թթ.), Երևանի Պետական Համալսարանի գիտական մասը որպես պրոռեկտոր (1956—1965 թթ.), ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտը (1965—1977 թթ.), իսկ այնուհետև առ այսօր տնօրենն է ԳԱԱ Հիմնակազմ Գրադարանի և նախագահը ՀՀ ԳԱԱ Նախագահության առընթեր գրադարանային խորհրդի՝ այս բնագավառներում իր նշանակալից մասնակցությունը բերելով Հայաստանի գիտական կյանքի առաջընթացին: Նալբանդյանը սիրելի դասախոս է ուսանողության համար՝ ուղիղ կես դար Երևանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետում նա հայ հին գրականության զարգացման յուրահատկություններն ու գաղափարական-գեղարվեստական հատկանիշներն է մեկնաբանում ապագա մանկավարժներին ու բանասերներին:

Գիտնականը, չնայած հետևում թողած 75 տարիներին, այժմ էլ լի է ստեղծագործական-հետազոտական բազմաթիվ ծրագրերով՝ կապված դարձյալ ազգային գրականության իր նախասիրած բնագավառների հետ: Նա շարունակում է լրացնել ու ամբողջացնել հայ հին և միջնադարյան գրականության պատմության վաղուց ձեռնարկած մենագրական աշխատանքը, որի հիմքում ընկած են հայագիտության արդի նվաճումները և իր մասնավոր ուսումնասիրությունների արդյունքները:

Բանասիր. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ